ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Արամուս գյուղական համայնքի հաշվետու համայնքային ժողովի

05 մայիս 2011 **գ. Արամուս**

2011 թվականի մայիսի 5-ին Արամուսի Վ. Առաքելյանի անվան միջնակարգ դպրոցում տեղի ունեցավ Արամուս համայնքի հաշվետու համայնքային ժողովը՝ 01.01.2010-01.05.2011թ.թ. ժամանակահատվածում համայնքի ղեկավարի կողմից կատարված աշխատանքների մասին:

Մասնակցությամբ՝

Համայնքի ավագանու անդամներ՝

1. Առաքելյան Հովհաննես
2. Եղիշյան Աշոտ
3. Խաչատրյան Արտակ
4. Սողոմոնյան Գեղամ
5. Ղարախանյան Արմեն
6. Ստեփանյան Վրույր
7. Համբարձումյան Գոռ
8. Փիլիպոսյան Վահան

Համայնքի ղեկավարի աշխատակազմից՝

1. Ստեփանյան Նորայր
2. Խաչատրյան Ապրես
3. Վարդանյան Մանե
4. Նիկողոսյան Սամվել
5. Վարդանյան Զաքարիա
6. Եղիազարյան Կարինե
7. Շմավոնյան Շահեն

Համայնքի բնակիչներ՝ 57 մարդ

ՕՐԱԿԱՐԳ

1. Համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի կողմից կատարված աշխատանքների հանրային իրազեկման մասին:

ԼՍԵՑԻՆ՝ Համայնքի ղեկավար Հրայր Նիկողոսյանին

Հարգելի Արամուսցիներ ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի պահանջներով, Ձեզ է ներկայացվում 2010թ. և 2011թ. չորս ամիսներին համայնքի ղեկավարի և աշխատակազմի կողմից իրականացված հիմնական գործառույթները:

Հաշվետու ժամանակահատվածում համայնքի ղեկավարի կողմից կայացվել են 77 որոշում 140 կարգադրություն, ավագանու կողմից կայացվել է 72 որոշում:

•ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

2009 թվականի դեկտեմբերի 21-ին համայնքի ավագանին իր N 72-Ն որոշմամբ հաստատվել է 2010թ. համայնքի բյուջեն,ըստ որի եկամուտները կազմել են 60312.8 հազ. դրամ, ծախսերը՝ 63889.7հազ. դրամ: Պակասուրդը կազմել է 3576.9հազ. դրամ, որը լրացվում է համայնքի բյուջեի մնացորդի հաշվին:Հողի հարկի չափը կազմել է 8621.2 հազ. դրամ, հավաքագրվել է 8768.2 հազ. դրամ, որը կազմում է տարեկան պլանի 101.7%-ը: Գույքահարկը նախատեսվել է 7208.0հազ. դրամ կատարվել է 100.6%-ով, որը կազմում է 7250.8 հազ. դրամ:Տեղական տուրքերը կատարվել է 101.6%, հավաքագրվել է 812.8 հազ. դրամ:Հողի վարձավճարներից հավաքագրվել է 2870.2 հազ. դրամ, որը կազմում է նախատեսվաց գումարի 102.5%-ը:

2010 թվականի դեկտեմբերի 20-ին համայնքի ավագանին իր N 50-Ն որոշմամբ հաստատվել է 2011թ. համայնքի բյուջեն, ըստ որի եկամուտները կազմել են 60146.7 հազ. դրամ, ծախսերը՝ 71248 հազ. դրամ: Տարեսկզբի մնացորդը կազմել է 11101.3հազ. դրամ, որը լրացվում է համայնքի բյուջեի մնացորդի հաշվին:Հողի հարկի չափը 2011թվականի 1-ին եռամսյակի համար կազմել է 1606.0 հազ. դրամ, հավաքագրվել է 1657.9 հազ. դրամ, որը կազմում է եռամսյակային պլանի 103.2%-ը: Գույքահարկը նախատեսվել է 1584.0հազ. դրամ կատարվել է 106.6%-ով, որը կազմում է 1688.1 հազ. դրամ:Տեղական տուրքերը կատարվել է 216.7%, հավաքագրվել է 195.0 հազ. դրամ:Հողի վարձավճարներից հավաքագրվել է 889.4 հազ. դրամ, որը կազմում է եռամսյակային նախատեսվաց գումարի 106.2%-ը:

Համայնքի փողոցների համարակալման համար համայնքի բյուջեից ծախսվել է 1360.0հազ. դրամ:

Գյուղապետարանի տարածքի նորոգման համար ծախսվել է 927.4, իսկ գյուղապետարանի պատուհանների կապիտալ նորոգման համար՝ 848.8հազ. դրամ:

• ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Համայնքը մեծ պատրաստակամությամբ է օժանդակում սոցիալական օգնության ծառայության բնագավառը:Օգնության խնդրանքով դիմած անապահով ընտանիքներին, մահացած բնակչների հարազատներին, համայնքում նոր ծնված երեխաների մայրերին, հաշմանդամներին տրվել է սոց. օգնություն համայնքի բյուջեից հաշվետու ժամանակաշրջանի համար 13062,2 հազ. դրամի չափով:

• ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌ

Առևտրի և սպասարկման բնագավառում մշակվել և համայնքի ավագանու կողմից հաստատվել է առևտրի, հասարակական սննդի և սպասարկման ոլորտի գործունեության համայնքային նոր կանոնները: Հսկողություն է իրականացվում առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում գործող 12 օբյեկտների նկատմամբ: Տրվել են ծխախոտի, ոգելից խմիչքի և վառելիքաքսայուղերի վաճառքի և իրացման թույլտվություններ, որոնցից գանձվել են համապատասխան տուրքի գումարները:

• ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Հաշվետու ժամանակահատվածում համայնքում կազմակերպվել է համայնքային սեփականություն համարվող հողերի աճուրդ վաճառք:Աճուրդների ընթացքում համայնքի բյուջե է մուտք եղել 1241.5հազ. դրամ:Համայնքի հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի փորձաքննության համար համայնքի բյուջեից հատկացվել է 505.2 հազ. դրամ:

• ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌ

Արամուսի միջնակարգ դպրոցի աշակերտներին տրվել է 198.5հազ. դրամի նվերներ իսկ գերազանցիկ աշակերտներին 50.0հազ.դրամի պարգևատրում: Մշակույթի տան պատուհանների կապիտալ վերանորոգման համար ծախսվել է 1834.0 հազ. դրամ, իսկ շենքի կապիտալ նորոգման համար 963.5 հազ. դրամ:Մշակույթի տանը գործում է պարի և երգի խմբակները, գործում է գրադարանը:Համայնքի բյուջեից աջակցություն է ցուցաբերվել պետական բուհերում սովորող անապահով ընտանիքների ուսանողներին՝ փողանցվել է ուսման վարձավճար՝ 1034.5 հազ. դրամի չափով:Գերազանցիկ ուսանողները խրախուսվել են համայնքապետարանի կողմից և նրանց տրվել է դրամական պարգևատրում՝ 400.0 հազ. դրամի չափով:

• ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Համայնքապետարանի կողմից կատարվել է համայնքի տարածքով անցնող հեղեղատարի մաքրման աշխատանքներ:
Համայնքում պատշաճ ձևով իրականցվում է աղբահանության աշխատանքները և այս ժամանակահատվածում համայնքի բյուջեից նշված աշխատանքների իրականացման համար համայնքի բյուջեից ծախսվել է 1410.5 հազ. դրամի չափով:

• *ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ,ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ԲՆԱԳԱՎԱՌ*

Համայնքում գործում է բժշկական ամբուլատորիան, որն իրականացնում է համայնքի բնակչության ընթացիկ բուժ. սպասարկումը, հղիների, նորածինների հաշվառումը: Համայնքի բյուջեի միջոցներից, համայնքի ղեկավարի նախաձեռնությամբ և ստեղծված սոցիալական ծառայության հանձնաժողովի կողմից կատարված ուսումնասիրություններից ելնելով համայնքի բյուջեից 5208,8հազ. դրամի չափով կատարվել է հիվանդանոցային ծառայությունների արժեքի փոխհատուցում, համայնքի բնակիչների առողջական խնդիրների լուծման նպատակով:

ՈՐՈՇՎԵՑ

1. Համայնքի ղեկավարի հաշվետվությունն ընդունել ի գիտություն:
2. Ընթացիկ տարում իրականացնել քառամյա ծրագրով նախատեսված աշխատանքները:

Արամուս համայնքի ղեկավար՝ *Հ. Նիկողոսյան*